ՀԱՆԳԻՍՏ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՐՈՍՅԱՆԻ
(1884—1962)

Հունիսի 1-ին, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, Բաքվում վախճանվեց Մայր Աթոռի միաբան գերաշնորհ Տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյանը։

Հանգուցյալը ծնվել էր 1884 թվականին Ալաշկերտում (Թոփրադկալե), գյուղական ընտանիքում։

Նախնական կրթությունն ստացել է ծխական դպրոցում և ապա ընդունվել Գևորգյան ճեմարան, որն ավարտել է 1907 թվականին։

1907—1913 թվականներին զբաղվել է ուսուցչությամբ։ 1913 թվականին դարձել է կուսակրոն քահանա։

1913—1923 թվականներին նշանակվել է Ամարասի վանքի վանահայր և մինչև 1943 թվականը միաժամանակ զբաղվել է ուսուցչությամբ։

1943—1945 թվականներին նշանակվել է Հյուսիսային Կովկասի թեմի առաջնորդ։ Իր բարվոք ծառայությունների համար նույն թվականին վարձատրվել է վարդապետական լանջախաչով։

1945 թվականին ձեռնադրվում է եպիսկոպոս և նշանակվում Ռումինիայի թեմի առաջնորդ։

1947—1954 թվականներին, առաջնորդական պաշտոններ է վարում Բաքվի, Հյուսիսային Կովկասի և Շիրակի թեմերում։

1955—1962 թվականներին, հիվանդության պատճառով, Սուրեն սրբազանը քաշվել էր աշխատանքից և մնում էր Մայր Աթոռում։

Հուլիսի 3-ին, ուրբաթ օրը, Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում կատարվեց հանգուցյալի վերջին օծման արարողությունը։

Բաքվի հայոց թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը մատուցեց Հոգեգալստյան սուրբ պատարագը։

Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը կատարեց հանգուցյալ Տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյանի վերջին օծումը և իր դամբանական քարոզում խոսեց նրա կյանքի և գործունեության մասին։

Հանգուցյալի վերջին օծման և թաղման արարողություններին իր մասնակցությունը բերեց նաև հոգեշնորհ Տ. Մեսրոպ արեպս Պալյանը։

Հանգուցյալի աճյունը ամփոփվեց Բաքվի հայոց գերեզմանատանը։

Գերաշնորհ Տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյանը գիտակից, զարգացած և հայրենասեր հոգևորական էր։

Հանգի՛ստ նրա ոսկորներին։